# ՏԵՂԵԿԱՆՔ
## Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների վերաբերյալ

| | Իրավունքի սուբյեկտը | Սոցիալական երաշխիքը | Իրավական հիմքը |
|---|---|---|---|
| 1. | Զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքների անդամներ, հաշմանդամության կենսաթոշակ ստացող զինծառայողի | Զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:<br><br>Ծախսերի հատուցում՝<br>- հուղարկավորության հետ կապված ՝700 հազար դրամ,<br>- գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման համար՝ 1.400.000 դրամ:<br><br>Հաշմանդամության կենսաթոշակ ստացող զինծառայողի ընտանիքների անդամներին տրվում է միայն 1.400.000 դրամը: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 18-ի N 341 |
| 2. | Զոհված զինծառայողի ընտանիքի անդամներ | Միանվագ պետական պարտադիր ապահովագրական գումարների հատկացում<br>ա) ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների, ինչպես նաև մարտական հերթապահության և հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքում՝ երկու միլիոն դրամի չափով,<br>բ) ծառայողական պարտականությունները կատարելիս զինծառայողների զոհվելու (մահանալու) դեպքում՝ մեկ միլիոն դրամի չափով: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշում 16-րդ կետ |
| 3. | Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողներ | Պարտադիր պետական ապահովագրություն՝ աշխատունակության կորստի չափին համամասնորեն, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքից ապահովագրվելու համապատասխան ընդհանուր գումարների նկատմամբ:<br><br>Պետական պարտադիր ապահովագրական գումարների հատկացնում՝<br>ա) առաջին խմբի հաշմանդամներին՝ սույն կետի առաջին պարբերության «բ» ենթակետում նշված գումարի 50 տոկոսի չափով | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշում 16-րդ կետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | (500,000 դրամ),<br>բ) երկրորդ խմբի հաշմանդամներին՝ սույն կետի առաջին պարբերության «բ» ենթակետում նշված գումարի 40 տոկոսի չափով (400,000 դրամ),<br>գ) երրորդ խմբի հաշմանդամներին՝ սույն կետի առաջին պարբերության «բ» ենթակետում նշված գումարի 30 տոկոսի չափով (300,000 դրամ): | |
| 4. | Զինծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամներ | Ամենամսյա պարգևավճարի իրավունք<br><br>Պարգևավճարների չափերը՝<br>1. զինկենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող՝<br>1) ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած անձինք՝<br>ա. 1-ին խմբի հաշմանդամը՝ 55000 դրամ,<br>բ. 2-րդ խմբի հաշմանդամը՝ 48000 դրամ,<br>գ. 3-րդ խմբի հաշմանդամը՝ 36000 դրամ.<br>2) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները՝ 5000 դրամ.<br>3) ՀՀ ազգային հերոսները՝ 150000 դրամ.<br>4) Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձինք՝ 15000 դրամ.<br>5) ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողի ընտանիքի անդամները՝<br>ա. յուրաքանչյուր երեխան՝ 16000 դրամ,<br>բ. յուրաքանչյուր այլ անդամ՝ 13000 դրամ.<br><br>2. տարիքային կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ, ծերության կամ հաշմանդամության նպաստ ստացող՝ ՀՀ պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողի ընտանիքի անդամները՝<br>1) յուրաքանչյուր երեխան՝ 38000 դրամ. | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34.1-ին հոդված<br><br>ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի N 668-Ն որոշում |

| | | | |
|---|---|---|---|
| | | 2) յուրաքանչյուր այլ անդամ՝ 31000 դրամ:<br><br>3. ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողի ընտանիքը (ծնողները, ամուսինը, 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև նրա 23 տարին լրանալը), 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում)՝ 30000 դրամ, յուրաքանչյուր երեխայի (առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող՝ 23 տարին չլրացած զավակի) համար՝ լրացուցիչ 20000 դրամ.<br><br>4. հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած անձի ընտանիքին՝ 250.000 դրամ.<br>5. հետմահու առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին՝ 150.000 դրամ.<br>6. հետմահու երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին՝ 100.000 դրամ: | ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 302-Ն որոշում |
| 5. | Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու զինվորական ծառայությունից արձակվող զինծառայող | Դրամական օգնություն, ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափերով (չափերը տարբերակված են ըստ պաշտոնի և զինծառայության ստաժի): | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 1-ին մաս<br><br>ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի N 1119-Ն որոշում (N1 հավելված, կետ 5, N 2 հավելված) |
| 6. | Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայող, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում, տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ 100.000 դրամի չափով: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 9-րդ մաս |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշում 13.1-ին կետ |
| 7. | Զինծառայողի ստացած վնասվածքի կամ խեղման կամ ծագած հիվանդության՝ ՀՀ տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժման (հետազոտության) անհնարինության դեպքում օտարերկրյա պետությունում բուժումն իրականացնող զինծառայող | ՀՀ-ից դուրս զինծառայողի բուժման, կեցության և ճանապարհածախսի գումարը հատկացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված |
| 8. | Առողջարանային բուժման իրավունք ունեցող զինծառայող | Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք:<br>Առողջարանային բուժման ուղեգրի արժեքի, ինչպես նաև բուժման վայր մեկնելու և վերադառնալու հետ կապված ծախսերը փոխհատուցվում են համապատասխան մարմինների՝ այդ նպատակով հատկացրած միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2001թ. հունիսի 20-ի N 553 որոշում |
| 9. | Զինծառայող, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայող և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիք՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում | Ապահովվում են բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:<br><br>Ծառայողական բնակելի տարածությունների բացակայության դեպքում բնակարաններ ձեռք բերելու համար զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված<br><br>ՀՀ կառավարության 2000թ. նոյեմբերի 27-ի N 778 որոշում 13-րդ կետ<br><br>ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 26-ի N 714 որոշում |
| 10. | Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք | Օգտվում են ջրահեռացման, աղբահանության և ռադիոյի բաժանորդային վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների |

| | | | |
|---|---|---|---|
| | ունեցող զինծառայող, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիք (ամուսինը, ծնողները, ինչպես նաև ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամները) | | սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված |
| 11. | Տրանսպորտային սպասարկման երաշխիք | Զինծառայողները քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից (բացառությամբ տաքսիներից), իսկ արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս ընտանիքի՝ նրանց ուղեկցող անդամները քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից) օգտվում են անվճար: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված |
| 12. | Զինծառայողների կրթություն ստանալու երաշխիքները | Պետությունը երաշխավորում է՝<br>ա) ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.<br>բ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիների զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ, մրցույթից դուրս պետական պատվերի շրջանակներում, ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում: | «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված |
| 13. | Զոհված զինծառայողի որդի կամ եղբայր՝ զորակոչիկ | ՀՀ սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող զորակոչիկները օգտվում են բնակության | «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի «բ» ենթակետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնությունից: Բնակության վայր է համարվում զորակոչիկի հաշվառման (հաշվառում չունենեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 150 կմ տեղակայված զորամասը: | |
| 14. | Զոհված զինծառայողի ընտանիքի միակ արու զավակ | Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել է) ՀՀ պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է: | «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-րդ կետի «բ» ենթակետ |
| 15. | Զոհված զինծառայող՝ մինչև նրա զավակներից մեկի 18 տարին լրանալը | Գույքահարկից ազատվում են՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը: | «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետ |